

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից



„Մենք բոլորս Հայ ենք“

Մենք բոլորս Հայ ենք“ այս կարգախոսով, հայ լրագրող Հրանտ Դինքը, որը, ցերեկով, փողոցում հունվարի 19-ին երկչոտ մարդասպանի ձեռքով սպանվեց, թաղվեց Թուրքիայի տարբեր ազգությունների հարյուր հազարավոր մարդկանց հուղարկավորությամբ:

Նա այն պայքարողներից էր, որն ազգերի փոխըմբռնման համար մինչև անգամ իր կյանքը զոհեց: Նա այն քչերից էր, ովքեր հակառակ ցեղասպանության ակտին Արևմտահայաստանում առաջին պատերազմի ընթացքում, դիմակայեցին բոլոր ճնշումներին ու տանջանքներին Թուրքիայի պետության կողմից, հակառակ բոլոր հակահայ հակակրանքերին իշխող խավի կողմից, մասցին Թուրքիայում և քուրդ ու թուրք ժողովրդի հետ համատեղ ապրեցին և աշխատեցին:

Նա հուսադրող անձնավորություն էր, որը փոխըմբռնման կամուրջ էր կառուցում հայ, քուրդ և թուրք ժողովրդների միջև: Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի դեպի ոչնչացում տանող հայոց ցեղասպանությունն ու բռնատեղահանությունը, ոչ այլ ինչ էր, քան պետականորեն ծրագրած և իրականացված ցեղասպանություն հայ ազգի նկատմամբ:

Ապրիլի 24-ին սկսվեց հայկական գոյության և մշակույթի բնաջնջումը: Հայոց հերոսական դիմադրությունը, ինչպիսին էր Մուսա լեռում տեղի ունեցածը, ի վիճակի չէր այդ մահվան մեքենան կանգնեցնելու: Օսմանյան պետության „Միություն և առաջադիմություն“ կուսակցությունը և իր բանակը բնաջնջման իրենց արշավանքներում հրահրեցին նաև քուրդ և թուրք ժողովրդներին՝ կոտորելու հայերին: Իսլամական խավերում շովինիստական և կրոնական ատելություն սերմանեցին հայերի և մյուս քրիստոնյաների նկատմամբ: Պետական ատյանները հրահրում էին ջարդել իրենց հայ հարևաններին և կողոպտել նրանց ունեցվածքը: Նրանք լիովին մասնակից էին հայ բռնազաղթին: Շատ քիչ, քաջ թուրք և քուրդ աշխատավորներ են օգնել հայերին: Թուրք և քուրդ աշխատավորությունը պատմական մեղսակցություն է կրում ցեղասպանության հարցում և պիտի վերջապես այդ մեղքի համար պատասխանատվություն կրի:

Օսմանյան Սուլթանության ավերակների հիման վրա ստեղծված Թուրքիայի հանրապետությունը փաստորեն ժառանգեց հայազերծ Արևմտահայաստան: Ցեղասպանության գլխավոր ոճրագործներից շատերը նոր հանրապետությունում նշանակվեցին բարձր պաշտոնների: Այս „նոր հարուստների“ հարստության հիմքում ընկած էր արևմտահայերից խլած ունեցվածքը:

Ինչ առնչվում է „հայկական հարցին“, այն Նոր Հանրապետությունում նորություն չէր, բացի որ Արևմտյան Հայաստանի բնիկ ժողովուրդը, մեծ մասամբ բնաջնջված էր և այդ ցեղասպանության ժխտումը դարձավ պատության կառույցի հիմնավոր մասը: Մի քանի տասնյակ հազար հայեր, որոնք Պոլսում վերապրեցին ցեղասպանությունը, ենթարկվեցին շարունակաբար խտրականության, հալածանքների և ճնշման:

Գիտակցելով այս բոլոր իրողությունները Հրանտ Դինքը իր պատրաստակամությունը հայտնեց փոխըմբռնում և հաշտություն սերմանել ժողովրդների մեջ:

Դա միայն այն դեպքում է հնարավոր, եթե ցեղասպանությունը ուրացող թրքական պետությունը առերեսվի իր պատմության հետ և պատասխանատվություն կրի:

Նախապայմանն այն էր և է, որ թուրք և քուրդ ժողովուրդները պիտի հանձն առնեն իրենց մեղսակցությունը ու պատասխանատվությունը և ստիպեն թրքական պետությանը ճանաչել ցեղասպանությունը:

Հրանտը պայքարում էր իր խոսքով և իր խիզախ գործունեությամբ, որպեսզի ցեղասպանությունը առաջին հերթին մեղսագործի խղճում դատապարտվի, իսկ „Հայ ժողովուրդը պատրաստ լինի ներելու“:

Ահա թե որն է նրա ժառանգությունը: Այդ էր պատճառը, որ Հրանտին բաժին հասավ բարբարոսական մահ: Նրա հուղարկավորումը ժողովրդի տարբեր խավերի կողմից արժանի պատասխան էր, „մենք բոլորս Հայ ենք“: Թուրքիայի պատմության մեջ սա առաջին դեպքն էր, երբ հարյուր հազարավորներ փողոց դուրս եկան իրենց սուգն ու զայրույթը արտահայտելու ցեղասպանության շարունակման դեմ:

Մենք կոմունիստներս, Հյուսիսասիան Քուրդիստան/Թուրքիայից և Գերմանիայից, հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, այտեղ Հայաստանում բարձրաձայնում ենք „մենք բոլորս հայ ենք“:

Մենք, Հյուսիսասիան Քուրդիստան/Թուրքիայի կոմունիստներս ամաչում ենք ցեղասպանությանը մասնակցած թուրք և քուրդ ժողովուրդների համար, մենք ամաչում և ներողություն ենք խնդրում, որ մեզ նախորդող Թուրքիայի կոմունիստներն ի վիճակի չեն եղել այդ ցեղասպանությունը կասեցնելու, մենք ամաչում և ներողություն ենք խնդրում, որ մեր նախնիները տասնյակ տարիներ շարունակ թրքական պետության ստերի ու ուրացման դեմ չեն պայքարել:

Շատ քիչ մարդիկ են համարձակվել, Իբրահիմ Քայիպաքայանի՝ Թուրքիայի ժողովրդների ազատագրման նախամարտիկի նման, հայերի կոտորածը բացահայտորեն անվանել պատմական իրողությունը:

Մենք կոչ ենք անում մեր ժողովրդներին՝ վերջապես ժամանակն է առերեսել ճշմարտությունը, ժամանակն է ցեղասպանության գործում մեղսակցությունն ընդունել: Միայն այս ուղիով է հնարավոր փոխըմբռնման հասնել ժողովուրդների միջև: Մենք գիտնեք՝ երբ ժողովուրդներն են խոսում միմյանց հետ, ապա շուտով էլ իրար հասկանում են:

Մենք, կոմունիստներս Հյուսիսային Քուրդստան/Թուրքիայից կոչ ենք հղում Թուրքիայի պետությանը, որպես Օսմանյան Սուլթանության իրավահաջորդին՝ Ցեղասպանությունը ճանաչել անմիջապես առանց որևէ պայմանի, իր բոլոր հետևանքներով հանդերձ:

- Հայկական համայնքի լրիվ իրավահավասարություն Հյուսիսային Քուրդստան/ Թուրքիայում:
- Պայքար հայերի դեմ ուղղված ռասիզմի, շովինիզմի և ամեն տեսակի արգելքի դեմ
- Վերադարձի իրավունք սպանված կամ բռնատեղահանված հայերի սերունդներին Թուրքիա:
- Անօրինաբար յուրացված հայկական ունեցվածքի վերադարձ կամ փոխհատուցում:
- Հատուցում՝ բոլոր հայկական սեփականությունների, որոնք բռնագրավված են պետության կողմից
- Արևմատահայստանի անջատման իրավունք

- Ճշմարտության լուսաբանում Թուրքիայի իշխող դասակարգի ցեղասպանության քաղաքականության մասին պետական դպրոցներում

- Հայոց սեփականության հատուցումը ՀՀ-ը, եթե սեփականատերերը և նրանց ժառանգները անհայտ են
- Հայաստան-Թուրքիա սահմանի բացում, իրավահավասար, հարևանական համագործակցություն ՀՀ հետ:

Միայն այս եղանակով կարելի է եղբայրանալ Հյուսիսային Քուրդստան/Թուրքիայում ապրող հայ ժողովրդի հետ, Հայաստանի և սփյուռքահայության հետ:

Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ ցեղասպանության գլխավոր հանցավորներն են թուրք օսմանյան իշխանավորները և նրանց հաջորդները: Սակայն մեղքի բաժին ունեն նաև պատերազմող կայսերական պետությունները, Գերմանական Կայսրությունն առաջին հերթին:

Որպես Օսմանյան Սուլթանության դաշնակից նրա զորավարները բարձր դիրք էին զբաղեցնում օսմանական բանակի գլխավոր շտաբում: Գերմանական իմպերիալիստներն ուղղակի պատասխանատու են ցեղասպանության համար:

Դաշնային Գերմանիայի բունդեսթագի 2005 թ. որոշման մեջ, ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ, ակնհայտորեն չխոսվեց ցեղասպանությունից: Այսպիսով Գերմանիան չի ընդունում իր պատասխանատվությունը և մեղսակցությունը հայոց ցեղասպանության գործում: Մենք Գերմանիայի կոմունիստներս պահանջում ենք Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից՝

Առանց պայմանի և վերապահումի ճանաչել ցեղասպանությունը և կրել պատասխանատվություն՝ իր բոլոր հետևանքներով հանդերձ (փոխհատուցում)



www.ydicagri.com
ydicagrilettesi@gmail.com



www.trotzalledem.tk
trotzalledem1@gmx.de